42. ԷՇՂԻԱ

Վախտոց մեկը մե էշղիեմ կ'էղնի։

Կ'էղնի որ իրեն երկրներ շատ գեշություն կէնի, էն յաներեն թողնի, կարիր երկիրներ կէրթա։

Կէրթա մե գեղիմ մեջ կը պըտըտվի, կէրթա գեղի ցածրի քով, մե կնիկըմ դուռը կայնած էր, կըսե.— Քուրիկ, ընձի միսաֆիր կէնե՞ս։

Կ'ըսե.— Ինչի՞ չէ, ասսու միսաֆիր ես, իշիր։

Էգ կնիկ օրփեվերի էր։ Էշղիան ձիոցեն գիշնի գը, կնիկ ձիոցեն բռնե գը, քաշե գը գոմը։ Բերե ձիուն դարի կուտա, նորեն բերե գը իրեն տակը դոշակ ձգե գը, բերե նորեն կայվե, չայ կէփե գը էդ մարտուն։ Նորեն ղրգե գը մեկ օչխար բերել կուտա, մորթե գը, թամիղ կերակուրներ հանե գը էդ օչխրրեն, շատ պատիվ կընե։

Իրիկուն գուքա, նստին շատ յարանության հարի սահաթի չորս հինգին։ Ընդից կըսե.— Քուրի'կ, քունս էկավ (քուր ախպեր էղեր ին)[1]։

Նորեն բերե յաթաղ կը'ձգե շատ պատվավոր, կըսե.— Ախպե'ր, քու յաթաղըդ պառկիր, ես էլ էրթամ, իմ յաթաղը պառկիմ։

Կ'ըսե.— Քնա, ուղուր էղնի, քեղի գիշեր բարի։

Մնան գը սահաթըմ էրկուա, քնի գը էդ էշղիեն, բիրդան կը զարթի, չարը իրեն կը մտնի։

[1] Բացատրություն ասացողինն է (Ս. Կ.)։

Կ'ըսե.— Ես կէրթամ էշ հարսի քով։

Գուքա, դեմի տան դրռանը դրպի գը։

Կընիկ կ'ըսե.— Ախպեր, ղու շաշն էկար, դուռն էնդին է, դուս պիտի էլլիս դե, դուռն էնդին է։

Գելլի դուռը կը պըտրտվի էս հեղին։

Դառնա գուքա իրեն տեղը, կը քնի մե էրկու սահաթ։ Ջարը նորեն կը մտնի էգ մարթու մեշ, կը ղարթի։

Կ'ըսե.— Ես նորեն պիտի էրթամ էդ կնգան քով։

Գուքա դրռան, կ'ըսե մեկոցը մեկ՝ դուռը բաց։

Կ'ըսե.— Չեմ բանա։

Կ'ըսե.— Ինչի՞ չես բանա։

Կ'ըսե.— Մենք չէ՞ որ քուր ախպեր ենք, չեմ բանա։

— Կոտրեմ գը։

Կ'ըսե.— Կոտրես չը կոտրես, չեմ բանա, մի էնէ, քու էս բանը դ ասպած չի ընթունե, իմ էրածը, քու էրածդ։

Հեր ի՞նչ կէնե, ի՞նչ լեղու թափե գը, դուռը չի բանա։ Վերջը կաշե քի իլլաջը կը կտրի, գուքա նստի մտածե գը, թե. «էս ի՞նչ բան է, ես մե էշղիեմ էղնիմ, էսի մե կնիկըմ, դուռը չը բանա՞»։ Նստի մե էրկու սահաթ մտածե գը, էս բանի վըրեն։

Մտածե գը, կ'ըսե.— Կէրթամ էդ դուռը կը կոտրեմ, ի՛նչ գալոց է, թող գա։

Գուքա կ'ըսե.— Դուռը բաց, ես էշքերե ծուռ սրտով եմ։

Կ'ըսե.— Չեմ բանա։

— Կոտրեմ կը։

Դուռը կոտրեց մտավ նե։

— Ա՛յ,— ըսավ կնիկ,— ասպած քու բելեդ տա, դու էս ի՞նչ պան էրիր, մենք էղանք աստրծու քով սևերես։ Իմ մեղքը քու ճիտդ։ Թընդրրի մեջը իբրեխրմ ջուր կա, առ գնա դուս, լվացվի, էգե։

Էդիկ օր դուս գելլի, կնիկը ետի ղիհեն դուռը կը գոցե վըրեն, էշղիան կը մնա սոխախ։ Օրն էլ զայմար ի, ցուրտ, էրկինք այազ, տակը ձուն։

Էշղիան կ'ըսե.— Դուռը բաց։

Կ'ըսե.— Չեմ բանա, անշախ սըրեն բերի, գնա սատկի։

Նորեն կը դառու յալվար[1], ոըջի[2] կ'էնի.—Դու գիտես,—կըսե,— ես կը մեռնիմ, բաց։

---

[1] Աղաչանք (Ծ. Բ.)։

[2] Խնդրանք (Ծ. Բ.)։

— Չեմ բանա, աշխարք աշխըրքով անցնի, դու, ես մենակ մնանք, գուտ չեմ բանա։

— Հապա,— կ'ըսե,— իմ վիճակս ի՞նչ պիտի դառնա։

— Առավոտուն էկե, ձիդ հեծե գնա։

Էշղիան դեպի գըյնի տներու սորեն։ Կ'էրթա մե ճրագիմ լուս կէրեի էրթիքեն։ Ինքն էլ շատ կը մսի, արթըխ շանին կը հասնի։

Կ'ըսե.— էրթիքեն գըյնիմ, ի՞նչ կէղնի թող էղնի։ Էսա ցուրտը քաշելուն, դուռը մեռնելուն, նեսը կը մեռնիմ։

Ընդավ նե, աշեց թե գոմի մեշ է, մարթու ձեն էկավ։

Աշեց մե գեղեցիկ ըռունտ հարսըմ, մե ըռունտ շահիլըմ նստած յարանություն կ'ընեն իրար հետ, սաքուի վըրեն նստած են, իրենց համար կ'ըսեն ու կը ծիծաղեն։

Մարթն ըսավ.— Կնի՛կ ընձի շատ կը սիրե՞ս։

Կընիկ ըսավ.— Քեզի աղի պես կը սիրեմ։

Մարթն ըսավ.— Իմ սերը ասպած գիտե, ես ըսեր եմ քեզի շատ կը սիրեմ, պիտի ըսես,— պարծենա գը։

Էշղիան նստի մութը տեղը էգոնց սեյր կընե։

Էդ էրկուս իրար հետ շատ զրուցեն գը։ Էդ մարթու վըրեն մե թըմբրութեն էկավ, ըսավ.— Կնի՛կ, քունըս էկավ. գլոխըս դնեմ ծընգիդ վըրեն քիչըմ քնիմ։

Դրեց գլոխը ծընգի վըրեն, քնավ։ Մեկ սահաթ ու կես քնավ ծընգի վըրեն։

Կընկա աշքը գեմի էրթիքն է, դառնա կաշե գը։

Էշղիան կ'ըսե.— Էս տեղ բանըմ կա, էս կնիկ ընչի՞ կաշե էրթիքեն, էս բանին ես վըրահաս էղնիմ։

Մեմե կնիկ ձեն կը հանե մարթուն. «Էրիկ մարթ քնա՞ծ ես», մարթուց ձեն չի էղնի։ Կաշե օր քնուկ է։ Կնիկ էրթիքը կաշե։

Մեմե ձեն կը հանե մարթուն, կաշե օր քնուկ է։

Նորեն էրթիքը կաշե, ձեռոք կ'էնե։

Էշղիան տեսնե գը քի մե շերիաըմ իջավ։ Կնիկը պռնեց շերիտը օղկիթ էրավ, ցըգեց էրկան բուգը, ձեռոք էրավ, վերեն քաշեցին։ Մարթը բաշլայեց խռխըռալ։

Էշղիան ըսավ. «Ընձիկ ասպած ղրկեց հոս»։

Հեմե թռավ, գոմի պատեն կախած թուրը առավ ու շերիտը կտրեց։ Մարթը թըրախկ վեր ընգավ։ Կես սահաթ ետև խելքը գլուխն էկավ, ելավ նստավ։

Ըսավ.— Ախպեր, դու վե՞վ ես, վե՞վ չես, դու էստեղ ինչի՞ ես էգե։

— Ասպած ընձի ղրկեց, ախպեր։

— Ըսել է, դու չը գայիր, ես կը մեռնեի, էս բան ի՞նչրխ էղավ։

Էշղիան նորեն պատմեց մարթու գլուխ էկածը։

— Է,— ըսավ,— սաբախտան դու վկայություն կուտաս էս կընգա ախպըրտանցը։

— Հա՛, վկայություն կուտամ։

Սաբախտան կը պացվի։ Մարթն կ'առնե էշղիան կէրթա կնգա ախպըրտանցը քով, եղածը թերիֆ կ'էնեն ախպըրտանցը։

— Ահա իմ վկաս,— կըսե։

— Էդմա՞ն է,— կը հարցընեն ախպըրտանքը (յոթ ախպեր կէղնին, յոթը քուր)[1]։

— Էդման է,— կըսե էշղիան։

Ախպըրտանքը դուքան նստին միշեվերե կ'էնին, կըսեն.— էն քրոջ դլոխը մեղի դիպավ, մենք օխտը քուր ունինք, մեկը առ նորեն էղնինք խնամի։

Մարթը պղտիկ քուրը կառնի։ Բերեն հարսանիքը կէնեն էդոր, օխտը զօր, օխտը գիշեր։

Մարթը էդ էշղիին միտքը պիտի իմանա, քի էնոր էրեխտիքի տրկեն ելնի։

Ըսավ.— Ախպեր, դու իրկուն ո՞ւրտեղ էիր միսաֆիր, հելէ պատմե։

Կ'ըսե.— Գեղի ցածի քովը մե օրփեվերի կնիկըմ կար, էնոր միսաֆիր էի, իրկուն էդ մարթը ընձիկ շատ էզիեթ, իքրամ էրավ, նորեն գիշերը չարը մրտավ ընձի, ելա էկա, էդ կնկան ուզեցի ձեռք թալել, էն ղաբուլ չէրավ, ամմա ընձի դասիսով դուս էրավ, գուռը փակեց վըրես։ Մնացի գուս, ելա ընգա գեղի մեշ, ժուռ էկա, էկա ձեր գոմի ճրագի լուսը տեսա։ Ես էնպես մսեր էի, օր ըսի դուսը մեռնելուն, նեսը, գոմը մեռնիմ, էրթիքեն ընգա ձեր գոմը։

Նորեն էն մարթը ըսավ.— Ախպեր, էդիկ իմ քուրս է եղեր, պիտի տամ քեզի, քու մարթկութան տրկենը ելլիմ։

Գուքա քուրոշը քովը, կըսե.— Աղջի, ես քեզի ֆիլան գիշերվա մարթուն տվի։

Կ'ըսե.— Չեմ առնի։

Կ'ըսե.— Անկարելի է, առնես պըտի, էդոր մարդկությունը ընձի շատ է, էն ընձի ազատեց։

Նորեն կնիկը ընթունեց։

Էշղիան պսակվավ, հարսանիք էրին՝ օխտը զօր, օխտը գիշեր։

[1] Բացատրությունն ասացողինն է (Ս. Կ.)։